Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1.	Անունը, ազգանունը	Գեղամ Գևորգյան
2.	Զբաղեցրած պաշտոնը	ՀՀ գյուղատնտեսության նախարարի պաշտոնակատար
3.	Գործուղման վայրը և ժամկետը	Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն) 2018 թվականի նոյեմբերի 19-20-ը
4.	Հրավիրող կողմը	Եվրասիական տնտեսական հանձնաժողով
5.	Գործուղման նպատակը աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը	Մասնակցություն Եվրասիական տնտեսական միության ագրոարդյունաբերական քաղաքականության հարցերով խորհրդի առաջին նիստին
6.	Քննարկված թեմաները	1. ԵԱՏՄ-ում համաձայնեցված ագրոարդյունաբերական քաղաքականության իրականացման ընթացքի մասին, 2. պահանջարկի և առաջարկի կանխատեսումների կատարելագործման մասին, 3. ինտեգրման գործընթացների ինտենսիվացման համատեքստում ԵԱՏՄ անդամ պետություններում գյուղատնտեսության թվայնացման հեռանկարների մասին, 4. ագրոարդյունաբերական համալիրում ինտեգրման խորացման հեռանկարային ուղղությունների մասին, 5. հարցերի հրատապ լուծման մեխանիզմների մշակմանը վերաբերող հարցերի մասին, 6. «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում գյուղատնտեսական կենդանիների հետ սելեկցիոն տոհմային աշխատանքի կատարման միասնականացմանն ուղղված միջոցների մասին» համաձայնագրի նախագծի մասին, 7. հակադեմփինգային միջոցառումներ կիրառելու մասին:
7.	Հանդիպումները, ելույթները, բարձրացված, քննարկված հարցերը	1. ԵՏՀ-ի արդյունաբերական և ագրոարդյունաբերական համալիրի հարցերով կոլեգիայի անդամ (նախարար) Ա. Սուբբոտինը ներկայացրել է ԵԱՏՄ-ում համաձայնեցված ագրոարդյունաբերական քաղաքականության իրականացման ընթացքը: Նշվել է, որ ԵՏՀ-ի և ԵԱՏՄ անդամ պետությունների կողմից ձեռնարկվել են պատշաճ միջոցառումներ՝ ինտեգրացման զարգացման և համաձայնեցված

		ագրոարդյունաբերական քաղաքականության իրականացման համար: 2. Քննարկվել են ԵԱՏՄ անդամ պետությունների կողմից ԵՏՀ ներկայացվող ագրոարդյունաբերական համալիրի զարգացման ազգային կանխատեսումները, գյուղատնտեսական արտադրանքի, մթերքների, վուշի և բամբակի մանրաթելի, կաշվեհումքի և բրդի համար պահանջարկի և առաջարկի հաշվեկշիռները: 3. Քննարկվել են ինտեգրման գործընթացների ինտենսիվացման համատեքստում ԵԱՏՄ անդամ պետություններում գյուղատնտեսության թվայնացման հեռանկարները: 4. ԵՏՀ-ի արդյունաբերական և ագրոարդյունաբերական համալիրի հարցերով կոլեգիայի անդամ (նախարար) Ա. Սուբբոտինը ներկայացրել է տեղեկատվություն՝ ԵԱՏՄ շրջանակներում ագրոարդյունաբերական համալիրում ինտեգրման խորացման հեռանկարային ուղղությունների մասին: 5. Կարևորվել է հարցերի հրատապ լուծման մեխանիզմների կատարելագործման հարցը: 6. ԵՏՀ-ի արդյունաբերական և ագրոարդյունաբերական համալիրի հարցերով կոլեգիայի անդամ (նախարար) Ա. Սուբբոտինը ներկայացրել է «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում գյուղատնտեսական կենդանիների հետ սելեկցիոն տոհմային աշխատանքի կատարման միասնականացմանն ուղղված միջոցների մասին» համաձայնագիրը ստորագրելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման ընթացքը: 7. Ներկայացվել է տեղեկատվություն հակադեմփինգային միջոցառումներ կիրառելու մասին՝ ԵԱՏՄ մաքսային տարածք ներմուծվող ԵՄ երկրների ծագում ունեցող հերբիցիդների նկատմամբ հակադեմփինգային մաքսատուրք սահմանելու միջոցով:
8.	Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները,	Ընդունվել է Եվրասիական տնտեսական միության ագրոարդյունաբերական քաղաքականության հարցերով խորհրդի առաջին նիստի

	պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը	արձանագրությունը: Որոշվել է ԵԱՏՄ ագրոարդյունաբերական քաղաքականության հարցերով խորհրդի հաջորդ նիստն անցկացնել 2019 թվականին ՀՀ-ում:
9.	Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները	1. Առաջարկվել է մեկամսյա ժամկետում ԵՏՀ ներկայացնել ազատ առևտրի համաձայնագրերի կնքման նպատակով վարվող բանակցություններում ԵԱՏՄ պրոակտիվ դիրքորոշման զարգացման համար պատասխանատու անձի թեկնածություն, - առաջարկվել է սահմանել արտահանման առաջնային ուղղություններ՝ ագրոպարենային համալիրի արտադրանքի մատակարարումներն ավելացնելու նպատակով: 2. Առաջարկվել է ԵՏՀ-ին՝ անդամ պետությունների հետ համատեղ սկսել ԵԱՏՄ անդամ պետությունների ագրոարդյունաբերական համալիրների միջնաժամկետ կանխատեսման (5 տարի ժամկետով) ձևավորման մեթոդաբանության նախագծի մշակումը: 3. Առաջարկվել է ակտիվացնել «Գյուղատնտեսական կենդանիների և կենդանական ծագման ապրանքների նույնականացման, գրանցման և հետագծելիության իրականացման ընթացքում համաձայնեցված մոտեցումների շրջանակներում ընդհանուր տվյալների բազաների ձևավորում, վարում և օգտագործում» ընդհանուր գործընթացի իրականացմանն ուղղված աշխատանքները, դիտարկել ապրանքների հետագծելիությունը ապահովող լոգիստիկ թվային հարթակների ստեղծման հնարավորությունները, դիտարկել անասնաբուժական, բուսասանիտարական և սննդամթերքի անվտանգության վերահսկողության ապահովման նպատակով տվյալների միասնական թվային մոդելի ստեղծման հարցը, քննարկել գյուղատնտեսական նշանակության հողերի համար միասնական տեղեկատվական համակարգերի ձևավորման հարցը, քննարկել սերմնանյութի և օրգանական արտադրանքի հետագծելիության նպատակով միասնական տեղեկատվական համակարգերի ձևավորման հարցը, իրականացնել միջոցառումներ՝ ԵԱՏՄ անդամ պետությունների թվային տնտեսության համար կադրերի պատրաստման միասնական կրթական ծրագրերի ընդունման մասով:

		4. Առաջարկվել է ընդունել ԵԱՏՄ անդամ պետությունների համաձայնեցված (համակարգված) ագրոարդյունաբերական քաղաքականության իրականացման միջոցառումների ծրագրի նախագիծը՝ ԵԱՏՄ մարմինների կողմից լրացուցիչ քննարկելու նպատակով: 5. Առաջարկվել է ներկայացնել առաջարկություններ՝ հարցերի հրատապ լուծման մեխանիզմների վերաբերյալ՝ տեսակոնֆերանս կապի ժամանակակից միջոցների օգտագործմամբ: 6. Նպատակահարմար է գտնվել լրացուցիչ քննարկել «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում գյուղատնտեսական կենդանիների հետ սելեկցիոն տոհմային աշխատանքի կատարման միասնականացմանն ուղղված միջոցների մասին» համաձայնագրի նախագիծը՝ վերջնական որոշում կայացնելու նպատակով: 7. Առաջարկվել է հակադեմփինգային միջոցառումներ կիրառելու մասին ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:
10.	Գործուղվողները	ՀՀ գյուղատնտեսության նախարարի պաշտոնակատար Գեղամ Գևորգյան ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալի պաշտոնակատար Արտակ Քամալյան
11.	Ստորագրությունը, ամսաթիվը	22.11.2018թ.